



ՔԱՂԱՔԱՆԵՆ ՏԵՍՈՒՄԻՆ

Վիսնա, 23 Դեկտեմբեր, 1897:

Անտրիս - Հռեգարիս: Գրգռութեանց զո՛ր գնաց Բաղնի կոմսին դարձնը: Նոր պաշտօնարանը կազմեցաւ Պարոն Գաուշի նախագահութեամբ. քայց թէ խորհրդանոցին խանգարեալ մեքնան շարժելու պիտի սկսի՝ ապագայի խնդիր է: Երկու կողմակցութիւններն ալ (գերմաններն ու չեխերը) եւ ոչ՝ «բայլ մը ոտին», տեղի տալ կ'ուզեն: Հունգարիայի հետ դրուելի պայմանադրութիւնն չյաջողեցաւ. գերմաններն կ'ուրախանան իրենց այս յաջողութեան վրայ. քայց բաւական վնաս կրեցին ի Բոհեմիա զրգռուած սինլորդէն:

Գերմանիա: Չինաստանը բաժնելու լուրը կարծես կը ստուգուի: Գերմանիա գրաւեց Կիաո-Չու նաւահանգիստն եւ ետ դարձնելու վրայ չի մտածեր. եթէ ստիպուի՝ 99 տարւան համար պիտի «վարձէ», — recte պիտի իւրացնէ: Ռուսաստան ալ գրաւեց Փորտ-Արկտուրը. Տապուն արդէն գրաւած է Վէ-Հոյ-Վէ: Անգղիացին՝ քնական է, պղտոր ջրերու կը սպասէ, ունեցածը կրկնապատկելու: Եւ որչափ կ'երեւայ համերաշխ կը գործեն Եւրոպայի դահլիճները:

Սպանիա: Փիւլիպեան կղզիներու ապստամբութիւնը վերջացաւ. Սպանիա կրնայ ուրախանալ. քայց Կուբա կը շարունակուի կռիւը: Թէպէտ ինքնօրէնութիւն խոստացուեցաւ, քայց «խուտուի» ներք գործնականապէս իրագործել միայն զենքի զօրութեամբ կ'ըլլայ, կ'ըսեն Կուբացիք: Փորձը հաստատեց թէ իրաւունք ունին: Միացեալ նահանգներն անտարբեր կը կենան առ այժմ՝ գոնէ ըստ երեւուիքին:

Գաղլիս: Դրէշֆուիս եւ Պանամայի խնդիրները կը շարունակուին նոյն գորութեամբ. քայց կը խայտառակուին «մատնիչ», կողմակիցները: Անելի կարելորդ մէտ մը վրայ կը դառնայ Գաղլիայի մտադրութիւնը, այսինքն Գերմանիայի

հետ դաշնակցելու եւ հաշտուելու: Այս քնական դաշնակցութեան պաշտպանն է՝ նրիտասայդ Գաղլիամ, իւր *Mercur de France* օրգանովը: Վրէժնւորութեան ոգին տեղի կու տայ հանդարտ խորհողութեան, որ սկսած է տեսնել այն պտուղները, որ կրնան յառաջանալ՝ այսպիսի երկու դրացի կենդրոնական ազգերու քնական դաշնակցութենէն: Օգուաները տեսնողները առ այժմ՝ սակաւաթիւ են, քայց ուրախ ենք որ վերջապէս կան տեսնողներ: Եւրոպայի յարաբերութիւններն ըլլորովին իսկ կերպարանափոխ պիտի ըլլան այսպիսի դաշնակցութեամբ, տարակույս չկայ: Այսպիսի մերձեցման մը ամենամծ յառաջացուցիչն է Ռուսիա, արդէն ծայրագոյն Արեւելք միայն գործեցին եւ կը գործեն Ռուսիա, Գաղլիա եւ Գերմանիա:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀՆԱԳՐԱՅԻՆ — Անտարկ մը հայ հնագրութեան վրայ. 1:

ՊԱՏՄԱՆԱՆ — Փաստոս Բիւզանդացի եւ իւր պատմութեան խաղաղադը. 6:

ԳՐԱՅԻՏԱՅԻՆ — Յօդուած եւ գիրք գրելու արուեստը. 10:

ԿՆՆԱՅԻՐԱՅԻՆ — Բժիշկ Տոքթ. Սենեքսիմ Տէր Մինասեան. 15:

ՄԱՏՆԱՅԻՐԱՅԻՆ — Եղեկայ «Եղ ընդդէմ աղանդոց» գործոյն յօրինման ժամանակն ու վաներականութիւնը. 22:

ԱՅԼԵԻՑԵԼՔ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՅԻՆՈՒԹԻՒՆ. 25:

ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹԵՐԻ ԺԱՂԱՅԺՈՒՆ. 1. Պարսիկք չի կեննա: — 2. «Նորայրական օգնութիւն» 3. Դր. Մէլիշենի յիշատակին: — 4. «Տիգրիս» շաբաթաթերթը: — 5. Գրական մրցանակներ: — 6. Պարսկական ազդեցութիւնը հին հայոց հեթանոսական կրօնի վրայ: — 7. Վրացի-կաթոլիկների հարցը: — 8. «Բիւզանդիստի», լուծման: — 9. «Շաւիղ» լրագիրը — դադրած: — 10. «Վերնայաքնակ մի հայ պարոնի» առ «Նոր Դար» գրած թղթակցութեան պատասխանը. 29:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 32:



ԿՐԱՏԱՐԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՄԱՆԱՆՏՈՒ ԽՄԱՐԱԴՐ

Վ. ԲԵՓԱՏԵԼ Վ. ՊԱՐԱՆԶ

ՎԻՆԵՆԱ, ԲԻՐԻՒՄԲԵՆԱ ԶՊԱՐԱՆ.